ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
<< ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>ՓԲԸ
4101, ՀՀ ք.Նոյեմբերյան Գարեգին Նժդեհ 15, հեռ. /0266/ 2-34-71,
էլ.փոստ noyemberyanbk1@gmail.com

ՀՎՀՀ
07404792
N-228
17.06.2026թ.

«ԱՐՄԵԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Արսեն Մկրտչյանին

Հարգելի՛ պարոն Մկրտչյան.

«Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, (այսուհետ՝ Գնորդ կամ Պատվիրատու) և «ԱՐՄԵԻՆ 91 ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «ԷԱՃԱՊՁԲ ՏՄ-ՆԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/35» ծածկագրով 05.05.2026 թվականին կնքված պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7 ենթակետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանգրի 2-րդ կետի 2.1.7.1 ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի.

Պայմանագրի 8-րդ կետի 8.15 ենթակետի համաձայն յուրաքանչյուր վիրահատության ժամանակ Վաճառողը պարտավոր է ապահովել պահանջվող իմպլանտի բոլոր չափերի հասանելիությունը «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում: Պատվիրատուն իր կողմից, նախապես ֆիքսված էլեկտրոնային փոստի միջոցով, ուղարկված գրավոր պահանջում նշում է մատակարարման ենթակա անհրաժեշտ իմպլանտների անվանումը, քանակը, չափը, տեսակը, պատրաստման նյութը: Մատակարարումը պետք է կատարվի 24/7 ռեժիմով՝ առավելագույնը 3 (երեք) ժամվա ընթացքում:

Արձանագրում ենք, որ Պատվիրատուի՝ noyemberyanbk1@gmail.com էլեկտրոնային փոստից Վաճառողի՝ նախապես ֆիքսված էլեկտրոնային փոստի հետևյալ հասցեին՝ vidtardan@gmail.com, 05.06.2026 թվականին, ժամը 14:59-ին ուղարկվել է 1 հատ «Փոքր մետաղական կոնստրուկցիաներ-հարթակներ (աջ ճաճանչոսկրի)» ապրանքի մատակարարման գրավոր պահանջ (պատվեր), որից հետո՝ առավելագույնը 3 (երեք) ժամվա ընթացքում, Վաճառողը պարտավոր էր մատակարարել պահանջվող ապրանքը: Մինչդեռ, Վաճառողը Պայմանագրով սահմանված առավելագույնը 3 (երեք) ժամվա ընթացքում չի իրականացրել պահանջված ապրանքի մատակարարումը, ինչով խախտել է իր պայմանագրային պարտավորությունը:

Ավելին, ապրանքի մատակարարման պահանջը ներկայացնելու օրվանից անցել է 5 օրից ավել ժամանակ, և Վաճառողը 16.06.2026 թվականի դրությամբ չի իրականացրել պահանջված ապրանքի մատակարարումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 16.06.2026 թվականի դրությամբ Վաճառողը չի իրականացրել Պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված և Պատվիրատուի 05.06.2026 թվականի գրավոր պահանջում նշված ապրանքի մատակարարումը՝ արձանագրենք, որ Վաճառողի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական խախտում, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, ինչը Պայմանագրի 2.1.7 ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հիմք է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու համար, ուստի հայտնում ենք, որ «Ն. Նասիբյանի անվան Նոյեմբերյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 17.06.2026 թվականին միակողմանի լրիվ լուծում է Պայմանագիրը:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագրի 8.11 կետի համաձայն՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կհրապարակվի www.procurement.am կայքի համապատասխան բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

«Ն.Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ» ՓԲԸ

Տնօրեն՝ Է.Գրիգորյան